Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Երևանի պետական համալսարանի
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2024 թ. մայիսի 23-ին կայացած թիվ 15 նիստի

Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 2024 թ. մայիսի 23-ին կայացած թիվ 15 նիստը նախագահում էր ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը: Գիտական խորհրդի 32 անդամներից գիտական խորհրդի նիստին մասնակցել են 24-ը: Նախագահողը քվեարկության դրեց օրակարգը և այն միաձայն հաստատվեց:

Օրակարգում.

1. **Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնը (1 դրույք) համալրելու նպատակով մրցութային ընտրության անցկացման հարցը:**
2. **Ընթացիկ հարցեր:**
   - **«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի մագիստրոսական կրթական ծրագրին լրացուցիչ ֆինանսավորում տրամադրելու կարգը» ներկայացնելու մասին հարցը:**

1. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչի 1,0 դրույքաչափով թափուր պաշտոնում կ. գ. թ., դոցենտ Աննա Ֆելիքսի Կարապետյանի ընտրության մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, կ.գ.դ., դոցենտ Կ. Ա. Ղազարյանը, մրցութային հանձնաժողովի նախագահ, կ.գ.թ. Լ.Ս. Գաբրիելյանը: Կ. Ա. Ղազարյանը հայտնեց, որ ԵՊՀ մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի տեղակալման մրցույթին մասնակցելու համար դիմել է ամբիոնի գործող վարիչ, կ.գ.թ., դոցենտ Աննա Ֆելիքսի Կարապետյանը:

Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովի նախագահը ծանոթացրեց ներկաներին թեկնածուի անձնական գործին: Լ.Ս. Գաբրիելյանը ներկայացրեց Ա. Ֆ. Կարապետյանի գիտամանկավարժական ակտիվ գործունեությունը, մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի կարծիքը, պրոֆեսորադասախոսական անձնակազմի բաց քվեարկության արդյունքները, ԵՊՀ որակավորման մանդատային հանձնաժողովի եզրակացությունը մրցույթի

պայմաններին համապատասխանելու վերաբերյալ, ինչպես նաև կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովի եզրակացությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. ԵՊՀ մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնում Աննա Ֆելիքսի Կարապետյանի թեկնածությունը դնել փակ գաղտնի քվեարկության:

Ելույթներից հետո անցկացվեց բաց քվեարկություն, որի ժամանակ ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով.

1. Ն. Վ. Ավթանդիլյան (նախագահ)
2. Ա. Ս. Ղազարյան
3. Լ. Գ. Գրիգորյան

ԼՍԵՑԻՆ. Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելուց հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Նիկոլայ Ավթանդիլյանի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին:

Քվեարկությանը մասնակցել են ֆակուլտետի գիտական խորհրդի 24 անդամներ:

Բաժանվել է 24 քվեաթերթիկ:

Քվեատուփում առկա է 24 քվեաթերթիկ:

Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչի 1.0 դրույքաչափով թափուր պաշտոնում կ. գ. թ., դոցենտ Աննա Ֆելիքսի Կարապետյանի փակ գաղտնի քվեարկության արդյունքներն են.

Կողմ՝ 24,

Դեմ՝ 0,

Անվավեր՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հաստատել ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկության արդյունքները,

2. Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքներով կենս.գիտ.թեկնածու, դոցենտ Աննա Ֆելիքսի Կարապետյանին համարել ընտրված ԵՊՀ մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչի պաշտոնում:

2. ԼՍԵՑԻՆ՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի մագիստրոսական կրթական ծրագրին լրացուցիչ ֆինանսավորում տրամադրելու կարգը» ներկայացնելու մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, կ.գ.դ., դոցենտ Կ. Ա. Ղազարյանը, ով ներկայացրեց ԵՊՀ մագիստրոսական կրթական ծրագրին լրացուցիչ ֆինանսավորում տրամադրելու կարգի վերաբերյալ տեղեկություններ:

Կ. Ղազարյանը նշեց, որ ԵՊՀ –ում գործող առկա ուսուցմամբ մագիստրոսական կրթական ծրագրերի զարգացման և բարելավման նպատակով նախատեսվում է տրամադրել լրացուցիչ ֆինանսավորում: Կ. Ղազարյանը գիտխորհրդի անդամներին ներկայացրեց լրացուցիչ ֆինանսավորման համար սահմանված կարգը, ըստ որի ֆինանսավորման համար կարող են դիմել ընդունելության արդյունքում 15 և ավելի ուսանող ունեցող ծրագրի ղեկավարը: Մագիստրոսական ծրագիրը կարող է ունենալ 2 տարի, 1.5 տարի և 1 տարի տևողություն: Առկա են լրացուցիչ պահանջներ, ըստ որի ծրագրի ուսումնական պլանում պետք է ներառված լինի անգլերենով դասավանդվող մասնագիտական առնվազն 1 դասընթաց, ինչպես նաև ծրագրում պետք է դասավանդի օտարերկրյա համալսարանի առնվազն մեկ հրավիրյալ պրոֆեսոր: Մեկ ուսումնական տարվա ընթացքում ծրագրում պետք է ներգրավված լինի տվյալ մասնագիտությամբ պրակտիկ գործունեություն ծավալող առնվազն 2 դասավանդող, թեզերի համաղեկավարումը պետք է կազմի առնվազն 30%: Ցանկալի է, որ ծրագրի շրջանակում կատարվի առնավազն մեկ միջմասնագիտական մագիստրոսական թեզ, հրատարակվի առնավազն 1 հոդված, գիտաժողովի ներկայացվի առնվազն 1 աշխատանք: Կարևորվում է նաև այն փաստը, որ ծրագրի ավարտից հետո մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների համամասնությունը պետք է կազմի 50%: Կարգում նշվում է նաև այն, որ դասախոսական կազմի առնվազն 30% պետք է լինեն մինչև 35 տարեկան երիտասարդ մասնագետներ:Կ. Ղազարյանը նշեց նաև, որ ծրագիրը պետք է բավարարի նշված լրացուցիչ չափանիշներից առնվազն երեքին:

Գիտական խորհրդի անդամները տեղեկացան, որ ֆինանսավորման համար դիմումները կից փաստաթղթերով պետք է ուղարկել յուրաքանչյուր ուսումնական տարվա մայիսի 25-30-ը ընկած ժամանակահատվածում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի անդամները քննարկելով ԵՊՀ մագիստրոսական կրթական ծրագրին լրացուցիչ ֆինանսավորում տրամադրելու կարգը, ներկայացնել առկայության դեպքում տվյալ պահանջներին համապատասխանող հավակնորդ մագիստրոսական կրթական ծրագրերի փաթեթը:

Գիտական խորհրդի նախագահ, կ.գ.դ., դոցենտ՝ Կ.Ա. Ղազարյան

Գիտական խորհրդի քարտուղար, կ.գ.թ., դոցենտ՝ Ի.Վ. Շահազիզյան